Քոստիփառնեայ նահանգի ճառ ի սուրբ Խաչն Քրիստոսի (758, 759)։ Ցամի Տեառն 950։ 7) Տիրանայ վարդապետի Հայոց պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի և Փիփիրէի (գուցէ Փիլիպէի) (763)։

ՔԱՂՈՒԱԾՔ

"Դարբանդ նամէ" անուանեալ պատմութենէն՝ Շամախւոյ վերաբերեալ։

Գլուխ ԺԴ. թերթ 10։ «820 թուին Հագրէթի. Էմիր-Թէյմուր-Խուր-Խան եկաւ զօրքով Խփչաղի կողմից Խազիրների և Դաղստանցիների երկիրը՝ անցնելով Դարբանդից, և ձմեռուայ չորս ամիսները անցկացրեց Շիրվան քաղաքում . . . ։ Շիրվանի վալին հիւրասիրելով Էմիր-Թէյմուրին՝ ընծայեց նրան 9 լաւ ձիեր, 9 էշեր, 9 ուղտեր բարձած թանկագին իրերով, 9 լուսնանման աղջկունք և 8 գեղեցիկ տղայք։ Էմիր-Թէյմուրը՝ տեսնելով մի տղայի պակաս լինելը՝ հարցրեց վալիին նորա պատճառը. վալին պատասխանեց թէ՝ ինն երորդը՝ ես ինքս եմ։ Այս խօսքը այնքան ախորժելի թուեց Էմիր-Թէյմուրին, որ վալիին անուանեց Շիրվանի Շահ. տուեց նրան տոհմական տիրապետութիւն բոլոր Շիրվանին մինչև Դաղստանի սահմանները։ ԺԴ. 10,11։ «Շահ Իսմայէլ-Իբն-Սէլդան-Հէյդար-Սէֆիլի, մուհարրէմի 20ին. 905 թուին Հաջ. 14 տարեկան հասակում Լեաչջան քաղաքից Գիլանի նահանգում, բարձրացաւ տիրել Շիրվանին։ Շիրվանի Շահը պատահեց նրան Ջիթանի անուանեալ երկրում և սպանուեց կռիւում . . . ։ 915 թուին Հաջ, Շահ Իսմայէլը երկրորդ անգամ գալով Շիրվան՝ տիրեց Բագուի և Դարբանդի բերդերին, և ամեն տարածութեան մինչև Խազիրների երկիրը։ ԺԵ. 11։ «1047 թուին Հաջ, տիրապետողը Իրանի Շահ Աբասը հրամայեց նորոգել Դարբանդի պարսպի պատերը. իսկ Շիրվանի կառավարիչ Նէջէֆ Կուլի Սուլթանին ջուր տանել քաղաքի մէջ և ջրի աւազան և ամբար շինել։

1783 թուին՝ Շիրւանու նահանգը եղել է ընդ իշխանու-